# ՎՐԱՍՏԱՆ

«ՑՐԱՆՑԱՆՕ» (ՍԱՔԱՐԹՎԵԼՕ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 69 - 70 (16872) ՇԱԲԱԹ 29 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ԳՈՐԾԱԴԻՐ

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԻ»

*Օգոստոսի 26-ին, Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հանդիպում ունեցավ երկրում գործող բանկերի ղեկավարների հետ: Հանդիպմանը կառավարության եւ բանկերի միջեւ ձեւակերպվեց համաձայնագիր, ըստ որի, եթե օգնության շահառուն վարկի պարտավորություն ունի բանկին, ապա բանկը չի վերցնի նշված սոցիալական աջակցությունը՝ այն մարելու համար:*



Ինչպես նշեց Գիորգի Գախարիան, կառավարությունը հետեւողականորեն իրականացնում է սոցիալական օգնության փաթեթը, եւ այդ գործում իրենց ավանդն են ներդնում նաեւ բանկերը: Մասնավորապես, կառավարության նախաձեռնությամբ, մինչեւ 18 տարեկան երեխաների համար, հատկացված 200 լարի օգնության փոխանցումը կսկսվի սեպտեմբերի 1-ից, իսկ բանկային պարտք ունեցող անձանցից նշված գումարը չի գանձվի:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց նաեւ կենսաթոշակների հարցում: Կոնկրետ, կառավարության ու բանկերի միջեւ համաձայնագրի համաձայն, կենսաթոշակները բաժանվելու են ամեն ամսվա 1-ից մինչեւ 14-ը՝ համապատասխան ժամանակացույցով:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

## ԴԱՐԱՎՈՐ ԵՐԱԶԱՆՔԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹ

### ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ 30 ՏԱՐԻՆ

*Ուղիղ 30 տարի առաջ, օգոստոսի 23-ին,այս օրը Խորհրդային Հայաստանի քաղաքացիները պատմական որոշում կայացրեցին՝ անկախությունն ընտրելով որպես միակ հնարավոր կարգավիճակ եւ երկրի հետագա զարգացման անշեղ ուղի:*




1990 թվականին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած Հայաստանի անկախության հռչակագիրը ոչ միայն իր անկախ պետությունը վերականգնելու հայ ժողովրդի դարավոր երազանքի արտահայտությունն էր, այլեւ նրա երկու հատվածների՝ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միավորման փաստացի իրողությանը իրավական տեսք տալու փորձ:

Հայաստանի անկախության մասին հռչակագիրը բաղկացած է 12 կետից: Հռչակագրի ընդունումից շուրջ 1 տարի անց՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որի արդյունքում ձեւավորվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

Անկախության հռչակագրի ընդունման 30-ամյակի առիթով հատուկ ուղերձով երկրի բնակչությանը դիմեցին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը, նախագահ Արմեն Սարգսյանը:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

## ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ՝ ՍԳՈ ՕՐ

### ԽՈՇՈՐ ՎԹԱՐ ՇԱՏԻԼԻՈՒՄ՝ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԶՈՀԵՐՈՎ

*Օգոստոսի 23-ի երեկոյան, Կովկասյան լեռնաշղթայի հյուսիս-արեւելքում, Խեւսուրեթիի պատմական հատվածի՝ Մցխեթա-Մթիանեթի տարածաշրջանի Դուշեթիի մունիցիպալիտետի բարձրալեռնային Շատիլի գյուղի մոտակայքում, մարդատար միկրոավտոբուսը ցած է գլորվել ժայռից՝ մոտ 80 մետր բարձրությունից: Ողբերգության արդյունքում զոհվել է 16 զբոսաշրջիկ եւ մեքենայի վարորդ Արկադի Ալավերդովը, երեքին ծանր վիճակում տեղափոխել են Թբիլիսի:*

*Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի հրամանագրով՝ օգոստոսի 25-ը երկրի ողջ տարածքով հայտարարվեց սգո օր եւ իջեցվեցին վարչական բոլոր շենքերի դրոշները:*

Վրաստանի ներքին գործերի նախարարության տեղեկատվությամբ՝ վթարի զոհ է դարձել 17 ուղեւոր, 3-ին հաջողվել է փրկել: Նրանց տեղափոխել են մայրաքաղաքի հիվանդանոցներ, վիճակը գնահատվում է ծանր:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՇԱՏԻԼԻՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՎՏՈՎԹԱՐԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Օգոստոսի 24-ին Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը իր ցավակցությունը հայտնեց Վրաստանի Դուշեթիի շրջանի Շատիլիի մոտ տեղի ունեցած մարդատար միկրոավտոբուսի ողբերգական վթարի կապակցությամբ:

Նիկոլ Փաշինյանը՝ Վրաստանի վարչապետին հասցեագրված ուղերձում, իր ցավակցությունը հայտնեց զոհվածների հարազատներին եւ տուժածներին արագ ապաքինում մաղթեց:

*Իր վրաց գործընկերոջը՝ Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեին, Շատիլիում տեղի ունեցած ավտովթարի ու մարդկային զոհերի կապակցությամբ, ցավակցական ուղերձ հղեց նաեւ Հայաստանի ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանը:*

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

## ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՋԱՎԱԽԵԹԻ



Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին, պետնախարար Թեա Ախվլեդիանին եւ պետնախարարի տեղակալ Լիա Գիգաուրին

*Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետական նախարար Թեա Ախվլեդիանին՝ ծանաչողական անդրանիկ այցով եղավ Ջավախեթիի երկրամասում:*

Ախալքալաքիում, այցի շրջանակներում, պետնախարարը հանդիպում ունեցավ երկրամասի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլու եւ ազգային փոքրամասնությամբ հոծաբնակ մունիցիպալիտետների քաղաքապետերի հետ: Հանդիպմանը ներկա էին

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

## ԿԱՅԱՑԱՎ ԴԱՎԻԹ ԶԱԼԿԱԼԻԱՆՈՒ ԵՎ ԶՈՀՐԱՊ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑԸ



Օգոստոսի 25-ին կայացավ Վրաստանի արտաքին գործերի նախարար Դավիթ Զալկալիանու եւ Հայաստանի արտաքին գործերի նախարար Զոհրապ Մնացականյանի հեռախոսազրույցը:

Զ.Մնացականյանը իր վրաց գործընկերոջը ցավակցություն հայտնեց Շատիլիում տեղի ունեցած ողբերգության կապակցությամբ: Ապա նախարարները տեղեկատվություն փոխանակեցին համավարակի կապակցությամբ Վրաստանում եւ Հայաստանում ստեղծված իրավիճակի մասին, անդրադարձան երկու երկրների օրակարգային հարցերին ու տարածաշրջանային հիմնախնդիրներին:

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

## ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ՄԵՆՔ ՔԱՅԼ ԵՆՔ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐԱՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

*Օգոստոսի 26-ին, Վրաստանի խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն անցկացրեց ճեպասուլիս, որտեղ հայտարարեց, որ հիմնարար ժողովրդավարական բարեփոխումների անցկացումից հետո, «Վրացական երազանքը» քայլ է կատարում իրականում ազատ եւ արդարացի ընտրությունների անցկացման համար:*

Նրա խոսքով՝ «Վրացական երազանքը» հանդես է գալիս նախաձեռնությամբ, ըստ որի՝ ընտրական օրենսգրքում կատարվելու են փոփոխություններ: Ըստ այդ փոփոխությունների, պատժամիջոցներ կսահմանվեն ընտրողների նկատմամբ բռնության, սպառնալիքի դրսեւորման եւ քվեարկության գաղտնիության խախտման դեպքերում:

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

## ԳԻՈՐԳԻ ՍԱԳԱՆԵԼԻՁԵՆ ԵՎ ԴԱՎԻԹ ՏՈՆՈՅԱՆԸ ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՐԿԿՈՂՄ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀԱՐՑԵՐ

Օգոստոսի 26-ին Հայաստանում Վրաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Գիորգի Սագանելիձեն եւ Հայաստանում Վրաստանի դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Գոգա Խաչիձեն, վերջինիս Հայաստանում առաքելության ավարտի կապակցությամբ, հանդիպում ունեցան Հայաստանի պաշտպանության նախարար Դավիթ Տոնոյանի հետ:

Հանդիպմանը քննարկվեցին պաշտպանության եւ անվտանգության ոլորտում վրաց-հայկական համագործակցությանը վերաբերող հարցեր:

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐ

# ՔԱՌՈՐԴ ԴԱՐ՝ ԵՐԿՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԻՑ ՀԵՏՈ



1995 թվականի օգոստոսի 24-ին Վրաստանի այն ժամանակվա Գերագույն խորհուրդը, գրեթե միաձայն հավանություն տվեց նորանկախ Վրաստանի ժողովրդավարության հաստատմանն ուղղված սահմանադրությամբ նոր խմբագրությանը: Սահմանադրության ընդունումից հետո, անցած 25 տարիների ընթացքում, երկիրը համաշխարհային գլոբալ փոփոխությունների պայմաններում անցել է նորանկախ պետություններին բնորոշ հաստատման որոշակի ուղի եւ պատահական չէր, որ փոխվող իրավիճակին համապատասխան, որոշակի փոփոխություններ էին կատարվում նաեւ հիմնական օրենքում: Գլխավորապես հատկանշական են 2018 թվականին իրականացված փոփոխությունները, որոնք երկրի գլխավոր փաստաթղթում է՛լ ավելի ընդգծեցին ժողովրդավարության եւ եվրոպական արժեքներին հավատարմության գաղափարները:

Այսօրվա դրությամբ, Վրաստանն ունի կայուն ժողովրդավարական զարգացման համար եվրոպական չափորոշիչներին համապատասխանող սահմանադրություն:

ԳՈՐԾԱԴԻՐ

# ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ԲԱՆԿԻ ՎԱՐԿԻ ՄԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՉԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԻ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

- Ծերերը գտնվում են բարձր ռիսկի խմբում, ուստի, բանկային ոլորտի հետ որոշել ենք, որ կենսաթոշակների բաժանումը կսկսվի ամեն ամսվա 1-ից եւ կտեւի մինչեւ 14-ը՝ համապատասխան ժամանակացույցի համաձայն: Դա կապահովի բանկը, եւ ոչ մի տեխնիկական խնդիր չի լինի: Հետեւաբար, հիմնական արդյունքը բազմամարդության նվազեցումն է, որ մեր կենսաթոշակառուները չկանգնեն հերթերում, քանի որ նրանք գտնվում են ռիսկային խմբում,- ասաց Գիորգի Գախարիան:

Կառավարության գրասենյակում, վարչապետի հետ հանդիպմանը, մասնակցեցին ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին, տնտեսական հարցերով վարչապետի խորհրդական Բեքա Լիլուաշվիլին, «Լիբերթի բանկի» գլխավոր տնօրեն Վասիլ Խոդելին, «Սաքարթվելոս բանկի» գլխավոր տնօրեն Արչիլ Գաչեչիլաձեն եւ «Թիբիսի բանկի» գլխավոր տնօրեն Վախթանգ Բուցխրիկիձեն:

Ավելացնենք, որ մինչեւ 18 տարեկան երեխաների համար միանվագ 200 լարի օգնություն ստանալու համար ծնողը պետք է գրանցվի «daxmareba.moh.gov.ge» կայքէջում: Վրաստանում ամեն օր աճում է միանվագ ֆինանսական օգնություն ստանալ ցանկացող մարդկանց թիվը, 810 հազար երեխա եւ 482 հազար ընտանիք արդեն գրանցվել է: Գրանցումը կշարունակվի մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 1-ը:

# ՄԻՆՉԵՎ 18 ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ 200 ԼԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՍՏԱՑՄԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԸ

***Ինչպես արդեն հաղորդել ենք, օգոստոսի 15-ից սկսվել եւ մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը կշարունակվի մինչեւ 18 տարեկան երեխաներին 200 լարի օգնության հանձնման գրանցման գործընթացը:***

Այդ օգնությունը ստանալու համար զրոյից մինչեւ 18 տարեկան երեխաների ծնողները պետք է գրանցվեն daxmareba.moh.gov.ge հատուկ կայքէջում:

Գրանցման մասին համապատասխան տեղեկությունը հասանելի է առողջապահության նախարարության www.moh.gov.ge կամ daxmareba.moh.gov.ge կայքէջում: Ընդ որում, էլեկտրոնային կայքէջում պետք է լրացվի հետեւյալ տեղեկատվությունը. երեխայի անուն, ազգանուն, ծննդյան ամսաթիվ, անձնական համար, ծնողի կամ օրինական ներկայացուցչի անուն, ազգանուն, անձնական համար, ծնողի կամ օրինական ներկայացուցչի անունով կոմերցիոն բանկային հաստատությունում բացված բանկային հաշվեհամար, բջջային հեռախոսահամար, որի վրա կուղարկվի կարճ հաղորդագրություն:




Այն դեպքում, եթե Արդարադատության նախարարության սպասարկման գործակալության կողմից չի հաստատվի կապը երեխայի եւ ծնողի միջեւ, ծնողը պետք է կայքէջում ներբեռնի երեխայի ծննդյան վկայականը:

Մեկ բջջային համարով հնարավոր է միայն մեկ օգտվողի գրանցում:

# ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊԵՑԻՆ ԵՐԿՐԱՄԱՍԵՐԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԵՐԻ ՀԵՏ



***Օգոստոսի 26-ին, կառավարության գրասենյակում կայացավ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի եւ փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման ու ենթակառույցների նախարար Մայա Ցքիտիշվիլու հանդիպումը Վրաստանի տարածաշրջանների պետական լիազոր-նահանգապետերի հետ:***

***Հանդիպմանը մասնակցեցին եւ ելույթ ունեցան Սամցխե-Ջավախեթիի նահանգապետ Բեսիկ Ամիրանաշվիլին եւ Քվեմո Քարթլիի նահանգապետ Շոթա Ռեխվիաշվիլին:***

Հանդիպմանը քննարկվեցին տարածաշրջանների մունիցիպալիտետներում իրականացվող ենթակառուցվածքային նախագծերն ու բնակչությանը հուզող հարցերի կարգավորման հեռանկարները: Առանձնակի ընդգծվեց բնակչության համար կենսական նշանակության հիմնախնդիրների կարճ ժամանակահատվածում կարգավորման անհրաժեշտությունը, եւ այդ գործընթացում երկրամասերի պետական լիազորներին վերապահվող համակարգողի գործառույթի արդյունավետ իրականացման դերը:

Հանդիպմանը վարչապետն ընդգծեց, որ կառավարության առաջնահերթությունն է, որպեսզի կարճ ժամկետում եւ արդյունավետ կարգավորվեն բնակչության առջեւ ծառացած բոլոր տեսակի հիմնախնդիրները: Հետեւաբար, տեղի բնակչությանը հուզող հարցերի ժամանակին բացահայտման եւ դրանց կարգավորման տեսանկյունից օպերատիվ աշխատանքին արտակարգ նշանակություն է տրվում:

Կառավարության ղեկավարը երկրամասերի պետական լիազորներին հանձնարարեց առավել նպաստել երկրամասերում առկա տնտեսական ներուժի զարգացմանը, ինչը նոր աշխատատեղերի ստեղծման եւ բնակչության բարեկեցության բարձրացման նախադրյալն է:

ՈՂԲԵՐԳՈՒԹՅՈՒՆ

# ՕԳՈՍՏՈՍԻ 25-ԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ՝ ՍԳՈ ՕՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Հարուցվել է քրեական գործ՝ քննությունը տարվում է Վրաստանի քրեական օրենսգրքի «Տրանսպորտային միջոցի շահագործման ընթացքում անվտանգության կանոնների խախտում» 276 հոդվածով:

Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, Վրաստանի խորհրդարանի խոսնակ Արչիլ Թալակվաձեն ցավակցություն են հայտնել Դուշեթիի շրջանում, Շատիլիի ճանապարհին տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով զոհվածների ընտանիքներին:

**«Վրաստան» թերթի խմբագրությունն իր վշտակցությունն է հայտնում Շատիլիի մոտակայքում տեղի ունեցած ավտովթարի հետեւանքով 17 զոհվածների ողբերգական մահվան կապակցությամբ, իսկ պատահարից փրկված եւ Թբիլիսիի հիվանդանոցներից մեկում բուժվող 3 վնասվածներին՝ մաղթում շուտափույթ առողջացում:**





ԲԵԼԱՌՈՒՍ

## ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ, ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է ՎԵՑ ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

*Ինչպես արդեն հաղորդել ենք, Բելառուսում շարունակվում են բողոքի ակցիաները, որի մասնակիցները պահանջում են օգոստոսի 9-ին անցկացված նախագահական ընտրությունների արդյունքների չեղարկում: Հիշեցնենք, որ ընտրություններին ձայների 80,1 տոկոսով հաղթեց գործող նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն:*

*Առաջին օրերին այդ ակցիաներն ուղեկցվել են իրավապահ մարմինների աշխատակիցների հետ ընդհարումներով:*

*Ներքին գործերի նախարարության տեղեկատվությամբ՝ ձերբակալվել է 6 հազարից ավելի մարդ, տուժել են մի քանի տասնյակ՝ կարգի պահապաններ ու ցուցարարներ:*

ԹՈՒՐՔԻԱ

## ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ԴԱՐՁՆՈՒՄ ԵՆ ՄԶԿԻԹՆԵՐ

*Ստամբուլի Սուրբ Սոֆյայի ուղղափառական թանգարան-տաճարը մահմեդական մզկիթի վերածելու Թուրքիայի կառավարության ընթացիկ տարվա հուլիսի 10-ի որոշմանը հաջորդեց Ստամբուլի եւս մեկ քրիստոնեական վանքի՝ Սուրբ Փրկիչ եկեղեցում գտնվող Խորա վանքը մզկիթի վերածելու որոշումը:*

*534 թվականին կառուցված եւ 74 տարի առաջ թանգարանի վերածված Խորա վանքը, որը գտնվում է Ստամբուլի Ֆաթիհի շրջանում, բյուզանդական ամենախորհրդանշական հուշարձաններից մեկն է, որը հայտնի է իր գլուխգործոց որմնանկարներով: Շենքը մզկիթի էին վերածել 1511 թվականին, ինչպես եւ Սուրբ Սոֆյայի տաճարը՝ Կոստանդնուպոլիսը նվաճելուց հետո: Վանքը որպես մզկիթ օգտագործվել է 434 տարի եւ թանգարանի է փոխակերպվել 1945 թվականին՝:*

ԱՄՆ

## ԹՐԱՄՓԸ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ԱՌԱՋԱԴՎԵՑ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ

*Օգոստոսի 27-ին Դոնալդ Թրամփը պաշտոնական համաձայնություն տվեց նախագահի ընտրության համար իր թեկնածությունը կրկին քվեարկության դնել Հանրապետական կուսակցությունից:*

*Նշենք, որ ժողովրդավարական կուսակցությունից Դոլանդ Թրամփի մրցակիցը Բարաք Օբամայի նախագահության օրոք ԱՄՆ փոխնախագահ Ջոն Բայդենն է:*

*Ավելացնենք, որ ԱՄՆ-ում ներկայիս նախագահական ընտրություններն անց են կացվում ռասսայական հարաբերությունների սրմամբ, կորոնավիրուսով պատճառով տնտեսական անկմամբ ծագած դժգոհությամբ պայմանավորված դիմակայության, ցուարարների ու իրավապահների ընդհարումների ֆոնի վրա:*

ՍԻՐԻԱ

## ԿՁԵՎԱՎՈՐՎԻ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

*Օգոստոսի 25-ին, Սիրիայի նախագահ Բաշար Ասադը, Հուսեյն Առնուսին, որը հունիսի 11-ից կատարում է երկրի նախարարների կաբինետի ղեկավարի պարտականությունները, հանձնարարել է կազմել նոր կառավարություն:*

*«Նախագահ Ասադը ստորագրել է թիվ 210 հրամանագիրը, որին համապատասխան Հուսեյն Առնուսին հանձնարարել է կազմել Սիրիայի Արաբական Հանրապետության Նախարարների նոր կաբինետ»,- ասված է գործակալության հաղորդագրության մեջ:*

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑ

## ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ՝ ԽԱՇՈՒՐԻԻ ՇՐՋԱՆՑՄԱՄԲ

### ԹԲԻԼԻՍԻԻՑ ՔՈՒԹԱՅԻՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԱԺԱՄԱՆԱԿԸ ԿՐՃԱՏՎՈՒՄ Է 30 ՐՈՊԵՈՎ

*Օգոստոսի 22-ին բացվեց 13 կիլոմետր երկարությամբ երթեւեկության ճանապարհ՝ Խաշուրիի շրջանցմամբ:*



Ճանապարհահատվածի բացման արարողությանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, փոխվարչապետ, տարածաշրջանային զարգացման եւ ենթակառուցվածքների նախարար Մայա Ցքիտիշվիլին, պաշտոնական այլ անձինք:

Շահագործման հանձնված 11,5 կիլոմետրանոց ճանապարհահատվածում գործում են քառուղի երթեւեկության գոտիներ, իսկ մեկուկես կիլոմետրանոց ճանապարհահատվածում ժամանակավորապես կգործեն երթեւեկության երկու ուղիներ: Նոր ճանապարհով Խաշուրի հասնելու ժամանակը կրճատվում է 40-50 տոկոսով, եւ ճանապարհահատվածն անցնելու համար՝ սովորական 20-ի փոխարեն կպահանջվի ընդամենը 10 րոպե:

Նշենք, որ ճանապարհային ենթակառույցների իրականացված եւ ընթացիկ նախագծերի վերաբերյալ, կառավարության կողմից բջջային հեռախոսների վրա ուղարկվել է հակիրճ հաղորդագրություն, ըստ որի, Խաշուրիի շրջանցիկ 13 կիլոմետրանոց ճանապարհից բացի, բացվել են Քութայիսին շրջանցող 19 կիլոմետրանոց եւ Զաքանա-Լանչխութի 14 կիլոմետրանոց մայրուղային ճանապարհահատվածները:

Ընդհանուր առմամբ, մինչեւ 2020 թվականի վերջը շահագործման կհանձնվի շուրջ 70 կիլոմետրանոց ավտոմայրուղին: Նոր ճանապարհի շնորհիվ հնարավոր կլինի Թբիլիսիից Բաթումի հասնել ընդամենը 4 ժամում: Շինարարության ընթացքի մեջ է նաեւ Ռիկոթիի լեռնանցքում 96 կամուրջների եւ 53 թունելների շինարարությունը:



## ՕԳՈՍՏՈՍԻ 28-ԻՆ ՎՐԱՑ ԵԿԵՂԵՑԻՆ ՆՇԵՑ ՄԱՐԻԱՄՈԲԱՆ

*Օգոստոսի 28-ին Վրաց Ուղղափառ եկեղեցին նշեց Աստվածածնի վերափոխման, Մարիամոբայի տոնը: Տոնի առիթով բոլոր գործող եկեղեցիներում մատուցվեց պատարագ:*

*Սիոնիի աթոռանիստ տաճարում հոգեւորաց դասի հետ պատարագ մատուցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը: Պատարագի ավարտին Սրբազնագույնը շնորհավորեց հավատացյալներին եւ նրանց դիմեց քարոզով:*

## 26 ՆՈՐ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ ՔՎԵՄՈ ՔԱՐԹԼԻՈՒՄ

*Վրաստանի կառավարության ֆինանսական աջակցությամբ, «Միացյալ ագրոնախագծի» շրջանակներում, Քվեմո Քարթլիում շահագործվել է 26 նոր ձեռնարկություն, վերազինվել՝ 161-ը:*

*Արդի չափանիշներով հագեցած նոր ձեռնարկություններում, ընդհանուր, իրականացվել է ավելի քան 40 միլիոն լարիի ներդրում եւ ստեղծվել՝ 1300 աշխատատեղ:*

*Նշենք, որ 2013 թվականից մինչ օրս, պետության ֆինանսական աջակցությամբ, Վրաստանում շահագործվել է 225 նոր ձեռնարկություն:*

## ԿՈՒՏԱԿԱՅԻՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՑ ԱՐԴԵՆ ՕԳՏՎՈՒՄ ԵՆ

*Օգոստոսի 26-ի տվյալներով՝ կուտակային կենսաթոշակից օգտվել է 423 մարդ:*

*Կենսաթոշակային գործակալության տեղեկատվությամբ՝ այդ թվից թոշակային տարիքը լրանալու հիման վրա 200 մասնակից, արտասահման մշտական բնակության մեկնած մեկ անձ, սահմանափակ ունակություններով 177 մարդ, իսկ ժառանգի իրավունքից օգտվել է 44 քաղաքացի:*

*Գործակալության փոխանցմամբ՝ կենսաթոշակային սխեմային ներգրավվածների թիվն օրեցօր ավելանում եւ մեկ ամսում գերազանցել է 9000-ը: Այս պահի դրությամբ, գործակալությունում գրանցված է ավելի քան մեկ միլիոն մարդ: Ընդհանուր գումարը կազմում է 926 միլիոն լարի:*



## ԲԱՑՎԵՑ ԹՎՈՎ 82-ՐԴ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԸ

*Օգոստոսի 27-ին, Վրաստանի Արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին Իմերեթիի երկրամասի Բաղդադիի մունիցիպալիտետի կենտրոնում մասնակցեց հասարակական կենտրոնի բացման արարողությանը:*

Ինչպես նշեց նախարարը, այն սպասարկելու է Բաղդադիի եւ հարակից գյուղերի շուրջ 27 հազար բնակիչների: Կենտրոնը «մեկ պատուհան» սկզբունքով, բնակչությանը կներկայացնի ավելի քան 200 սպասարկում:

Նորաբաց հասարակական կենտրոնում կարելի է ստանալ սպասարկումներ, նաեւ՝ Վրաստանի կառավարության կողմից վերջերս նախաձեռնած «Պետությունը՝ քո գործընկեր» ծրագրի մանրամասները, ներգրավվել դրա իրականացմանը: Կենտրոնում քաղաքացիները կարող են օգտվել տպագիր եւ թվային գրադարանի, անվտանգ համացանցի սպասարկումներից: Նշենք, որ կենտրոնը ապահովված է շուրջօրյա անվճար համացանցով գործում է նաեւ Սկայպի սենյակ: Բաղդադիի հասարակական կենտրոնը նախատեսված է նաեւ սպասարկումներ մատուցել սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց:

Նշենք, որ Բաղդադիում նորաբաց հասարակական կենտրոնը թվով 82-րդն է Վրաստանում: Բացի այդ, Վրաստանի տարածքով բացվել եւ գործում է Արդարադատության 24 տուն: Հասարակական կենտրոնների եւ Արդարադատության տների կառուցման եւ շահագործման ծրագիրը՝ իրականացվում է Եվրամիության աջակցությամբ:

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## «ԷԿՎԻԼԻԲՐԻՈՒՄԸ» ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՉՈՐՍ ԳՅՈՒՂԵՐԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԸ ՀԱՄԱԼՐԵՑ ԳՐՔԵՐՈՎ

*Վրաստանի խորհրդարանի ազգային գրադարանի «Էկվիլիբրիում» շարժումը շարունակում է աջակցության ցուցաբերումը Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում գործող գրադարաններին, նրանց համալրում նորագույն գրականությամբ:*

Շարժման հիմնադիր, ազգային գրադարանի տնօրեն Գիորգի Կեկելիձեն, Ջավախեթիում, այցի շրջանակներում, հանդիպում ունեցավ տեղի երիտասարդների հետ եւ խոսեց գրադարանների համալրման, ընդհանրապես գրքի նշանակության մասին:

Նշենք, որ օգոստոսի 21-ին «Էկվիլիբրիում» շարժման ներկայացուցիչները, Գիորգի Կեկելիձեի ղեկավարությամբ, եղան Ախալքալաքիի մունիցիպալիտետի չորս՝ Մեծ եւ Փոքր Դիլիսկա, Պտենա եւ Չունչխա գյուղերում:

- Այսօրվա «Էկվիլիբրիումը» առնչվեց Ախալքալաքիի չորս գյուղերին: Արդեն ութ տարի է, ինչ շարժումը ակտիվ աշխատանք է իրականացնում ողջ Վրաստանի տարածքով: Եղել ենք 1200 գյուղերում, կարգավորել գրադարանները: Օրինակ, այստեղ՝ Ախալքալաքիում, արդեն եղել ենք 43 գյուղերում: Անպայման կլինենք նաեւ մյուս բնակավայրերում,- հայտարարեց Գիորգի Կեկելիձեն:

Նշենք, որ «Էկվիլիբրիում» շարժման աջակիցը «Գալֆի» ընկերությունն է:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԱՎԵԼԱՑԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿԻ ԲԱՐԵՓՈԽՄԱՆ ՀԱՐՑՈՎ

***Ավելացած արժեքի հարկի (ԱԱՀ) նոր բարեփոխման մանրամասների ներկայացման նպատակով, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության նախաձեռնությամբ, երկրի տարբեր երկրամասերում շարունակվում են աշխատանքային հանդիպումները գործարար սուբյեկտների ներկայացուցիչների հետ: Հերթական հանդիպումն անցկացվեց Ռուսթավիում՝ գրանցված գործարարների մասնակցությամբ:***



ԱԱՀ-ի նոր բարեփոխումը կբարելավի հարկային վարչարարության գործընթացը, ինչպես նաեւ կներդնի եվրոպական լավագույն պրակտիկան, որը նպաստում է Վրաստանի ու Եվրամիությունում գրանցված գործարարների միջեւ համագործակցությունը, միաժամանակ վրացական եւ եվրոպական ԱԱՀ-ի մերձեցումը կբարելավի ներդրումային միջավայրը, իսկ դյուրացված հարկային պարտավորությունների կատարմամբ կնվազեն վիճարկելի դեպքերը:

Քաղաքացիների սպասարկման Ռուսթավիի սերվիսկենտրոնում անցկացված հանդիպմանը՝ եկամուտների ծառայության պետի տեղակալ Մանուկա Բարաթաշվիլին ներկայացրեց ԱԱՀ-ի նոր բարեփոխման վերաբերյալ մանրամասները եւ պատասխանեց առաջադրված հարցերին:

Աշխատանքային ձեւաչափով անցկացված հանդիպմանը ներկա էին նաեւ եկամուտների ծառայության հարկային եւ մաքսային մեթոդաբանության դեպարտամենտի պետի տեղակալ Շալվա Կոպալեիշվիլին եւ իրավաբանական դեպարտամենտի պետ Լեւան Ծիթելաշվիլին:

Նման տեղեկատվական հանդիպումները հարկատուների հետ Վրաստանի տարբեր երկրամասերում ակտիվորեն շարունակվում են:

Ծավալուն տեղեկատվությունը վերոնշյալ փոփոխությունների վերաբերյալ տեղադրված է https://www.rs.ge/6608

## ՍԱՐՓԻՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ՍԻԳԱՐԵՏ




Օգոստոսի 19-20-ին, Սարփիի սահմանային անցումակետում, բացահայտվել է երկրի տարածք ապօրինաբար չհայտագրված սիգարետ եւ ալկոհոլային խմիչք ներկրելու երեք փաստ: Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա խուզարկել են Թուրքիայի քաղաքացիներ Ք.Մ.-ի, Ս.Կ.-ի եւ Է.Գ.-ի կառավարման ներքո միջազգային բեռնափոխադրումների ավտոտրանսպորտային միջոցը: Խուզարկության արդյունքում, հայտնաբերվել է 5400 գլանակ չհայտագրված սիգարետ եւ մեծ քանակությամբ ալկոհոլային խմիչք:

Վրաստանի մաքսային օրենսգրքի 168 հոդվածի 3-րդ մասի համաձայն, իրավախախտում թույլ տված քաղաքացիների ապրանքը բռնագրավվել է եւ, որպես պատժամիջոց, յուրաքանչյուրին սահմանվել է 1000-ական լարիի տուգանք:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

# ԱՐՉԻԼ ԹԱԼԱԿՎԱՁԵ. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՑ ՀԵՏՈ ՄԵՆՔ ՔԱՅԼ ԵՆՔ ՁԵՌՆԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆՈՒՄ ԱԶԱՏ ԵՎ ԱՐԴԱՐԱՑԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)




Ընտրական օրենսգրքում նշվելու է, որ նման գործողությունների իրականացման դեպքում իրավախախտում թույլ տված անձի նկատմամբ կհարուցվի քրեական պատասխանատվության գործ: Համապատասխան փոփոխություններ կկատարվեն նաեւ քրեական օրենսգրքում:

Ներկայացրած փոփոխության համաձայն, քվեարկության գաղտնիության խախտման ընտրողների նկատմամբ բռնության կամ սպառնալիքի դեպքում, կսահմանվի տուգանք կամ տնային կալանք՝ վեց ամսից մինչեւ երկու տարի ժամկետով, կամ ազատազրկում՝ 3 տարի ժամկետով:

Ինչպես նշեց Արչիլ Թալակվաձեն, կառավարող կուսակցության կողմից վերոնշյալ փոփոխություններն արդեն մշակվել են եւ այսօր գրանցվել Վրաստանի խորհրդարանում:

- Ինչպես տեսնում եք, վերոնշյալ փոփոխություններն է'լ ավելի են խստացնում պատասխանատվությունն ընտրական գործընթացում հնարավոր խախտումների նկատմամբ եւ ավելանում է ընտրողի կողմից ազատ ընտրության եւ քվեարկության գաղտնիության պահպանման որակը: Մեր նպատակն է՝ 2020 թվականի խորհրդարանական ընտրություններն անցկացվեն ժողովրդավարական բարձր չափորոշիչներով: Մենք հարգում եւ վստահում ենք մեր հասարակայնության ազատ ընտրությանը, հավատում ենք, որ մեզ կպաշտպանեն, հավատում ենք, որ «Վրացական երազանքը» արդար ընտրություններում կհաղթի,- հայտարարեց Արչիլ Թալակվաձեն:

# ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻ. «ՄԵՐ ՆՊԱՏԱԿԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽՐԱԽՈՒՍՈՒՄՆ Է»

*Կառավարող «Վրացական երազանք» կուսակցությունից, հոկտեմբերին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններին, մայրաքաղաքի Իսանիի ընտրատարածքում առաջադրված մեծամասնական պատգամավորի թեկնածու Կախա Կախիշվիլին այցելեց շրջանի Էլիա թաղամասի Սահնգիլո փողոցում կառուցվող մանկապարտեզի շինհրապարակ, ծանոթացավ 230 սանի համար նախատեսված հաստատության շինարարության ընթացքին:*



- Դիտեցինք Սահնգիլո փողոցում կառուցվող մանկապարտեզը, որը նախատեսված է 230 երեխայի համար եւ, որը կունենա շուրջ 60 աշխատակից:

- Այս թաղամասում մինչ այդ մանկապարտեզ չի եղել, եւ տեղի բնակիչներս ստիպված էինք մեր երեխաներին տանել հեռու գտնվող մանկապարտեզներ,- մեզ հետ զրույցում ասաց տեղի բնակիչ, երեք երեխաների մայր Աննա Հարությունովան:

Ժամանակակից չափորոշիչներով կառուցվող մանկապարտեզը լրիվությամբ համապատասխանում է սահմանափակ հնարավորություններ ունեցող անձանց պահանջներին: Մանկապարտեզի շինարարությունը ծրագրված է ավարտել ընթացիկ տարվա վերջին: Շինարարության արժեքը կազմում է 2,3 միլիոն լարի:

- Մեզ հետ հանդիպմանը, պարոն Կախիշվիլին նշեց, որ «Երազանքի» նպատակը նախադպրոցական հաստատությունների շինարարության խրախուսումն է, ինչն է'լ ավելի կբարձրացնի երկրում կրթության մակարդակը: Ինչ խոսք, դա ողջունելի է, եւ մենք՝ հարեւաններով, որոշել ենք, հնարավորինս օգնել հարցի լուծմանը, այսինքն՝ ընտրություններին պաշտպանել Կախա Կախիշվիլու թեկնածությունը,- նշեց Աննա Հարությունովան:

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

# ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆՈՒ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ՋԱՎԱԽԵԹԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ախալքալաքի քաղաքապետ Յուրի Ունանյանը, Նինոծմինդայի քաղաքապետ Անիվարդ Մոսոյանը, Ախալցիխեի քաղաքապետ Զազա Մելիքիձեն, Ասպինձայի քաղաքապետ Ռուստոմ Մագրաքվելիձեն, Բորժոմիի քաղաքապետի պաշտոնակատար Դավիթ Ջալիշվիլին: Պետնախարարի եւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարների հանդիպմանը ներկա էր նաեւ Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, Ախալքալաքի-Նինոծմինդա ընտրատարածքից «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավորի թեկնածու Սամվել Մանուկյանը:

Հանդիպմանը քննարկվեցին պետության նոր ռազմավարության տեսանկյունից քաղաքացիական ինտեգրման գործընթացում առկա հիմնախնդիրներն ու մոտեցումները:

Այցի շրջանակներում՝ պետնախարար Թեա Ախվլեդիանին եղավ Ախալքալաքիում եւ հանդիպում ունեցավ տեղի բնակչության հետ: Հանդիպումը ճանաչողական բնույթ ուներ, որի ընթացքում պետնախարարը ներկաներին ծանոթացրեց քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման պետական քաղաքականությանն առնչվող մոտեցումներին ու հետաքրքրվեց դրանց վերաբերյալ բնակչության հայեցակետով:

Ինչպես նշեց Թեա Ախվլեդիանին, Վրաստանի իշխանության նշանակալի առաջնահերթություններից մեկը քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման քաղաքականության արդյունավետ իրականացումն է: Հենց այդ նպատակով, պետնախարարի նախաձեռնությամբ, ճանաչողական հանդիպումները պետնախարարի կարգավիճակում սկսվեցին եւ կշարունակվեն ազգային փոքրամասնությամբ հոծաբնակ բոլոր տարածաշրջաններում:

- Սամցխե-Ջավախեթիի տարածաշրջանում տեղական իշխանության ներկայացուցիչների, ինչպես նաեւ՝ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ անմիջական շփման պայմաններում անցկացված աշխատանքային ծանոթության բնույթի հանդիպումը մեծ նշանակություն ունի, առանձնապես ներկա փուլում, երբ մեկնարկել է քաղաքացիական իրավահավասարության եւ ինտեգրման նոր ռազմավարության մշակումը: Այդ գործընթացում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների ներգրավումն ու նրանց հայեցակետին ծանոթանալը, մեզ համար առաջնահերթային խնդիր է: Եվս մեկ անգամ ցանկանում եմ ընդգծել, որ Վրաստանի իշխանության առաջնահերթություններից է, որպեսզի մեր երկրի յուրաքանչյուր քաղաքացին ունենա երկրի հասարակական, տնտեսական եւ քաղաքական գործունեությունում լիարժեք ներգրավվելու հնարավորություն, ինչի համար պետնախարարի աշխատակազմը ջանք չի խնայի,- հայտարարեց պետնախարար Թեա Ախվլեդիանին:

COVID-19

# ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍ. 24 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ՎԱՐԱԿՎԱԾ, 17 ՄԻԼԻՈՆԻՑ ԱՎԵԼԻ ԱՊԱՔԻՆՎԱԾ




*Աշխարհում COVID-19-ի հաստատված դեպքերի թիվն անցել է 24 670 միլիոնը: Կորոնավիրուսի հետազոտական կենտրոնների տվյալների համաձայն, մահացածների թիվը գերազանցել է 836 517հազարը: Ապաքինվել է 17 միլիոն 125 336 մարդ:*

Վիրուսով վարակվածների թվով առաջին տեղում գտնվող **ԱՄՆ-ում 6 049 440** հաստատված դեպք կա: Այստեղ մահացածների թիվը **184 927** է: Այս ցուցանիշով ԱՄՆ-ն առաջինն է աշխարհում: Երկրորդ տեղում **Բրազիլիան է**, որտեղ հաստատված դեպքերի թիվը հասել է **3 764 493-ի**, մահացածներինը՝ **118 726-ի:**

Վարակվածների թվով հաջորդ տեղում **Հնդկաստանն է**, որտեղ վարակվել է **3 395 796** մարդ, մահացել՝ **61 755-ը**: **Ռուսաստանում** կորոնավիրուսով վարակվել է **980 405**, վարակի հետեւանքով մահացել՝ **16 914** մարդ:

**Պերուում** վարակվել է **621 997**, վարակի հետեւանքով մահացել՝ **28 277** մարդ: **Հարավային Աֆրիկայում** վարակվել է **618 286**, վարակի հետեւանքով մահացել՝ **13 628** մարդ: Հարավային Աֆրիկային հաջորդում են Կոլումբիան, Մեքսիկան, Իսպանիան եւ Չիլին:

**Հայաստանում**, ընդհանուր առմամբ, վարակվածների թիվը հասնում է **43 451**-ի, մահացածներինը՝ **869**-ի, ապաքինվածներինը՝ **37 264**-ի:

**Ադրբեջանում** վարակվածների թիվը կազմում է **35 844** մարդ: Վարակից մահացել է **524**, ապաքինվել՝ **33 364** մարդ:

Օգոստոսի 28-ի տվյալներով՝ **Վրաստանում** վարակվել է **1 455** մարդ, մահացել՝ **19-ը**, ապաքինվել՝ **1196-ը**:

# ԱՄԻՐԱՆ ԳԱՄԿՐԵԼԻՁԵ. «ԱՄԵՆԱՅՆ ՀԱՎԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ, ԱՇՆԱՆԸ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՊԱՏՎԱՍՏԱՆՅՈՒԹԵՐԸ ԿՀԱՍՏԱՏՎԵՆ»



*Օգոստոսի 27-ին, միջգերատեսչական համակարգող խորհրդի նիստի ավարտից հետո, Վրաստանի հիվանդությունների վերահսկման եւ հասարակական առողջապահության ազգային կենտրոնի ղեկավար Ամիրան Գամկրելիձեն հայտարարեց, որ, ամենայն հավանականությամբ, արդեն աշնանը հնարավոր է, որ կարգավորող մարմինների կողմից հաստատվի մի քանի պատվաստանյութ:*

Նրա խոսքով, պատվաստանյութերի ստացման հետ կապված որոշակի ընթացակարգեր պետք է ավարտվեն, եւ այդ հրահանգները այսօր տրվել են բոլոր գերատեսչություններին:

- Պաշտպանվելու ավելի լավ միջոց չկա, քան դիմակը: Դրսում եւ ներսում, եթե շատ մարդիկ հավաքվում են միասին, եւ հեռավորություն պահպանելը հնարավոր չէ, պետք է դիմակ կրել: Սա լրջորեն նվազեցնում է վարակի տարածման ռիսկը, - ասաց Ամիրան Գամկրելիձեն:

# ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ԱՍՏԻՃԱՆԱԲԱՐ ՎԵՐԱՑՎՈՒՄ ԵՆ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-ԻՑ ԿԲԱՑՎԵՆ ԿԻՆՈԹԱՏՐՈՆՆԵՐԸ, ԻՍԿ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ՝ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԸ

- Վրաստանում կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումները աստիճանաբար վերացվում են: Վրաստանում սեպտեմբերի 15-ից բացվում են կինոթատրոնները, հոկտեմբերի 1-ից՝ թատրոնները,- այս մասին հայտարարեց միջգերատեսչական համակարգող խորհրդի օպերատիվ շտաբի ղեկավար Ալեքսանդրե Խոջեւանիշվիլին: